Barekendani Ankowtinerë : Katakaxag Mek Ararov t'argmaneal i gaggierene

Source gallica.bnf.fr / Bibliothèque nationale de France

Barekendani Ankowtinerë : Katakaxag Mek Ararov t'argmaneal i gaggierene. 1909.

1/ Les contenus accessibles sur le site Gallica sont pour la plupart des reproductions numériques d'oeuvres tombées dans le domaine public provenant des collections de la BnF.Leur réutilisation s'inscrit dans le cadre de la loi n°78-753 du 17 juillet 1978 :
*La réutilisation non commerciale de ces contenus est libre et gratuite dans le respect de la législation en vigueur et notamment du maintien de la mention de source.
*La réutilisation commerciale de ces contenus est payante et fait l'objet d'une licence. Est entendue par réutilisation commerciale la revente de contenus sous forme de produits élaborés ou de fourniture de service.

Cliquer ici pour accéder aux tarifs et à la licence

2/ Les contenus de Gallica sont la propriété de la BnF au sens de l'article L.2112-1 du code général de la propriété des personnes publiques.

3/ Quelques contenus sont soumis à un régime de réutilisation particulier. Il s'agit :

*des reproductions de documents protégés par un droit d'auteur appartenant à un tiers. Ces documents ne peuvent être réutilisés, sauf dans le cadre de la copie privée, sans l'autorisation préalable du titulaire des droits.
*des reproductions de documents conservés dans les bibliothèques ou autres institutions partenaires. Ceux-ci sont signalés par la mention Source gallica.BnF.fr / Bibliothèque municipale de ... (ou autre partenaire). L'utilisateur est invité à s'informer auprès de ces bibliothèques de leurs conditions de réutilisation.

4/ Gallica constitue une base de données, dont la BnF est le producteur, protégée au sens des articles L341-1 et suivants du code de la propriété intellectuelle.

5/ Les présentes conditions d'utilisation des contenus de Gallica sont régies par la loi française. En cas de réutilisation prévue dans un autre pays, il appartient à chaque utilisateur de vérifier la conformité de son projet avec le droit de ce pays.

6/ L'utilisateur s'engage à respecter les présentes conditions d'utilisation ainsi que la législation en vigueur, notamment en matière de propriété intellectuelle. En cas de non respect de ces dispositions, il est notamment passible d'une amende prévue par la loi du 17 juillet 1978.

7/ Pour obtenir un document de Gallica en haute définition, contacter reutilisation@bnf.fr.

19.9

Վ. ՄԱԼԽԱՍՅԱՆ

Բարեգործական

Հասարակություն

ԳՐԱԴԱՐԱՆ
ԹՎԱԿԱՆ 1920
Վ. ՄԱԼԽԱՍՅԱՆ

1483

Source gallica.bnf.fr / Bibliothèque nationale de France

41327956

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԱՇՃԵԱՆ ԳՐԱՏԱՆ

ԲԱՐԵԿԵՆԴԱՆԻ

ԱՂԿՈՒՏԻՆԵՐԸ

ԿԱՏԱԿԱԽԱՂ ՄԷԿ ԱՐԱՐՈՒԱԾ

ԹԱՐԳՄԱՆԵԱԼ Ի ԳԱՂՂԻԵՐԷՆԷ

ՀԱՒԱՏ ԳՐԱՒՃՈՒՆ
ԱՇՃԵԱՆ
ՀԱՐԷԹ-ԷԼ-ԶՕՂԷԲ ԿԱՀԻՐԷ
H. O. ACHDJIAN
LIBRAIRE et NEGOCIANT
de TIMBRES-POSTE
HARET-EL-ZOGHEB
LE CAIRE (Egypte)

Կ. ՊՈԼԻՍ
Ցպագր. ՋՈՒՐԵՀ Ն. ՊԷՐՊԷՐԵԱՆ
1909

2008-129987
BnF
Acq

ԱՆՁԻՆՔ

ՄՈՒՋԱՐ, աչքերը ցաւոտ ծերունի վանականն մը
ԱԼԷՔՍԻ, Մուզարի եղբօր որդին
ՖՐԷՏԷՐԻԳ, Ալէքսիի ընկերը
ԱԼՖՕՆՍ, » »
ՖՐԱՆՍՈՒԱ, » »
ՖԼՕՐԻՆ, Ալէքսիի սիրուհին
ԿԱՄԵԼԻԱ, Ֆրէտէրիգի »
ԺՕԶԼՅԻՆ, Ֆրանսուայի »
ՎԻՕԼԷԹ, Ալֆոնսի »

ԱՑՑԵՑԻ Բարիզ

Տեսարանը կը ներկայացնէ գեղեցիկ սրահ մը, խորը, ինչպէս և ձախ կողմը դուռ, սեղան և աթոռք։

ԲԱՐԵԿԵՆԴԱՆԻ ԱՆԿՈՒՏԻՆԵՐԸ

ՏԵՍԻԼ Ա.

ԱԼԷՔՍԻ ԵՒ ՕՐԻՈՐԴՔ

Ֆլօրին (Ալեքսիին) — Ա՛լ խոստացաք, այնպէս չէ՞։
Ալէքսի (Մտազբաղ) — Այո՛, օրիորդ։
Ֆլօրին (Ընկերացը) — Ուրեմն երթանք պատրաստուինք։
Գամէլիա — Աղուոր Բարեկենդան մը պիտի ընենք։
Ժօզէֆին — Այո՛, այո՛, լաւ պիտի զբօսնուինք։
Ֆլօրին — Ա՛ռ այժմ մնաք բարեաւ, Ալէքսի։
Գամէլիա — Ցտեսութի՛ւն, միւսիւ Ալէքսի։
Ժօզէֆին — Մի՛ մոռնաք մեզի։ (Օրիորդէ կը մեկնին)
Ալէքսի — Շնորհակալ եմ, օրիորդք։ (Առանձին) Աղուոր Բարեկենդան մը պիտի ընենք, հը՛, բայց ի՞նչպէս. գրպանիս մէջ կուտ մը չկայ։ Նախ և առաջ ասոր մէկ ճարը գտնելու ենք. այո՛, այս անկուտութեան դարմանն մը փնտռելու ենք։ Երկու շաբաթուան մէջ հօրեղբօրս երեք անգամ նամակ գրեցի, վանդաւոր հիւանդութեամբ մը տառապելս իմացուցի, բայց չի պատասխանեց, ոտակ մը չի դրկեց. ես ալ բարկացած մնայ. ուստի հիմա, յուզարկաւորութեանս համար անհրաժեշտ եղած ծախքին պատկառելի գումարը թող դրկէ։ Թէպէտ և խեղճ մարդը իրաւունք ունէր նոյն նամակները չի պատասխանելու, վասն զի ծնողաց մեռնելէն ի վեր՝ նա զիս ազէկ խնամեց և ուսումնս կատարելագործելու համար մինչեւ Բարիզ դրկեց, ուր չորս տարի է կը բնակիմ, բայց վարժարանին մէջ, սիրահարութենէ ուրիշ բան մը տրված չունիմ, առջի գիտցածներս ալ մոռցայ։ Հօրեղբօրմէս գրքի, թուղթի, գրչի ու մելանի համար քաշած գումարներս գտնելիքներուն մէջ լմնցուցի, և վերջապէս մարդը վարպետ երբեւ ու գրած տուներուս ա՛լ սկսաւ ականջ չի կախել, որով պարտաւորեցայ վերջին փորձ մը ընել։ Ֆրեատերիգ ընկերոջս ապաւէցի, անոր կողմէն հօրեղբօրս ուղղեալ նամակ մը գրել տուի, որուն մէջ, իմ ժանտատենդէ մեռնիլս կը գուժէ և անկէ կը պահանջէ յուզարկաւորութեանս համար ըլլալիք ծախքը։ Բայց պիտի ըսէք թէ վերջապէս օր մը ոչ ըլլալս ի՞նչպէս պիտի իմացնենք մեր ծերուկին, է՛հ, այն ալ հաքը կը մտածենք։ Հիմա նայինք որ Ֆրէտէրիգ վերադառնայ նամակատուէն, ուր քիչ մը առաջ՝ հօրեղբօրէս գալիք ըստակները առնելու գնաց։ Ա՛հ, վայրկեան մը առաջ ձեռքս հանէր սա ոսկիները. ո՞ւր մնացիր, Ֆրէտէրիգ, շուտ ե-

կուր. (Ներսեն երգողի մը ձայն)։ Ինքն է... յաջողած ըլլալուն համար ուրախութենէն կ'երգէ։ (Դռնեն կը նայի) Ա՜, ան չէ, Ալֆոնսն է եղեր։

ՏԵՍԻԼ Բ.

ՆՈՅՆ ԵՒ ԱԼՖՈՆՍ

Ալէքսի — Ի՞նչ լուր, բարեկամ։

Ալֆոնս — Առ այժմ ձեռքերս պարապ գրպաններուս մէջ դրած՝ վեր վար պտտելէս ուրիշ լուր մը չունիմ։

Ալէքսի — Ֆրէտէրիգը չի տեսա՞ր։

Ալֆոնս — Ո՛չ։

Ալէքսի — Ուրե՞մն... Ինծի նայէ, չե՞նք կրնար մէկէն փոխառութիւն մ'ընել։

Ալֆոնս — Եղբա՛յր, չորս տարի է որ աս վարժարանին մէջն ենք, ես այս պատիճան դրամական նեղ կացութիւն չէի տեսեր. առաջները, հարիւրին 3—4 տոկոսով շատ դիւրութեամբ կրնայինք փոխառութիւններ ընել, զոր ամսագլխուն մեր ծնողքներէն առած ամսականներէնէս կը հատուցանէինք. բայց հիմա, եթէ ինքզինքնիս ալ աւանդ թողուենք, կուտ մը չեն տար մեզի, եղբա՛յր։

Ալէքսի — Բայց այդ թշուառական սեղանաւորները չե՞ն մտածեր թէ ի՞նչպէս պիտի անցուցեն ինք. Բարեկենդանը։ Մտածէ՛ անգամ մը, եղբայր, դուն սիրուհի մը ունենաս, որ կը խնդրէ Բարեկենդանը հետդ անցուցնել, դուն ալ խոստացած ըլլաս, բայց ետքը... ա՜հ, հիմա կը թռցնեմ... գլրպանդ կուտ մը չըլլա՛յ... ասկէ աւելի ցաւալի վիճակ մը կ'ըլլա՞յ, այս սեղանաւորները դուրթ ըսած բանդ ամենևին չունին։

Ալֆոնս — Զարմանալի խօսքեր կ'ընես, Ալէքսի, այդ տեսակ մարդոց քով գուրթ և կարեկցութի՞ւն կը փնտռես, մը-տածէ՛ անգամ մը թէ գրելու համար գործածած գրիչներնիս երկաթ, պատուաքաղնիս երկաթ, դգալներնիս երկաթ, կերակուրներնիս, ջուրերնուս ամաններն երկաթ, մինչեւ իսկ անկողիններնիս երկաթի վրայ տարածուած են, է՞, ուրեմն, այսչափ երկաթի մէջ ապրող մարդուն սիրտն ալ մի թէ երկաթի չի՞ փոխուիր։

Ալէքսի — Բայց ասանկ չըլլար, ճար մը գտնելու ենք։

Ալֆոնս — Ես գտայ։

Ալէքսի — Ի՞նչպէս։

Ալֆոնս — Ֆրէտէրիգէն կ'ուզենք։

Ալէքսի — Օ՜, գուա՛ր ունեցողը։
Ալֆոնս — Ուրեմն Ֆրանսուաէն կ'ուզենք, անոր համար ընելիք մը չունիս ա՛։
Ալէքսի — Էօ՛ֆ, պարսպ խօսքերով սիրուս մի՛ նեղացներ Ալֆոնս, մեզի պէս այդ անկուտինրուն ալ խօսքը մի՛ ըներ։
Ալֆոնս — Ուրեմն ի՞նչ ընենք։
Ալէքսի — Դուն քանի՞ ֆրանք ունիս։
Ալֆոնս — Երկու ֆրանք ունիմ, եթէ իմ բաժինիս ինկածը այսչափ է՝ կուտամ։
Ալէքսի — Երեք ֆրանք ալ ես ունիմ։
Ալֆոնս — Երկու երեք ալ՝ հինգ։
Ալէքսի — Հինգ ֆրանքով Բարեկենդան կ'ըլլա՞յ։
Ալֆոնս — Իրաւ որ չեմ գիտեր (Կը մտածէ)։
Ալէքսի — Ի՞նչ կը մտածես։
Ալֆոնս — Մխաքս միջոց մը եկաւ, բայց արդեօք կը յաջողի՞նք։
Ալէքսի — Ի՛նչ միջոց, ըսէ՛, կ'ապաչեմ։
Ալֆոնս — Սա... սա դիմացը նստող հանդիսաւոր պարոններէն ուզենք կ'ըսեմ, թերեւս մեր վրայ կը խղճան։
Ալէքսի — Մէյ մը փորձենք, բերաննիս չի յոգնիր ա՛։
(Միսքերաց կ'երգեն)

Բարեկենդանի անկուտիներ ենք,
Գիշեր ու ցորեկ մենք հով կը կլանք,
Տեսնողը մեզ խիստ հարուստ կը կարծէ,
Կուշտը անօթին վիճակը ի՞նչ գիտէ։

Ալէքսի — Կեցիր, ոտքի ձայն կայ. դէպի հոս մէկը կուգայ. (Խորի դռնեն Ցայելով) ո՛հ, Ֆրանսուան է եղեր... աւա՜ղ, Ֆրէտէրիգ չերեւար տակաւին։

ՏԵՍԻԼ Գ.
ՆՈՑՆՔ, ՖՐԱՆՍՈՒԱ (եղբը) ՖՐԷՏԷՐԻԳ

Ֆրան — Բարեւ ձեզ, ընկերք։
Ալէքսի — Ֆրէտէրիգը տեսա՞ր։
Ալֆոնս — Ի՞նչ լուր։
Ֆրան — Ոչի՛նչ։
Ալէք — Եւ ինչո՞ւ այդչափ կարմիր ես։
Ֆրան — Պատճառը կ'ուզէ՞ք հասկնալ։
Ալֆ — Այո՛, այո՛, հասկնալու ենք։
Ֆրան — Ցայտնի է հա՛, անկուտիւթիւնն է. նամակա-

առունը գացեր էի՝ մօրս կողմէն եկած նամակը առնելու։

Ալֆ — Լա՛ւ, առի՞ր։

Ֆրան — Այո՛, մայրս ինձմէ սուակ ուզեր էր, ո՞ւսկից պիտի տամ. մեզի պէս ուսանողին գրպանը դրամ կը գտնուի՞, թող թէ խեղճ կինը իրաւունք ունի, վասն զի բժշկութեան վկայագիրս պիտի առնեմ ըսելով՝ զինքը խաբած և կլորիկ գումար մը ձեռքէն առած էի. խեղճը հիմա զիս առաջին կարգի բժիշկ մը կը կարծէ և ասոր համար սուակ կ'ուզէ. այս անպատեհութեան առաջքն առնելու համար Ֆրէտերիգէն մէկ երկու նաբոլէոն ուզեցի, չի տուաւ, ես ալ բակացայ և շունչս գինեասունը առնելով՝ քանի մը հատ իրարու վրայ նետեցի. ահա ասկէ առաջ եկաւ դէմքիս կարմրութիւնը։

Ալէքս — Ֆրէտերիգը տեսա՞ր։

Ֆրան — Այո՛, նամակատան մէջ։

Ալէքս (Ուրախ) — Ուրեմն եկուր մէյ մը քեզ համբուրեմ (Կը համբուրէ)։

Ֆրան (Զարմանքով) — Աս ի՞նչ ըսել է։

Ալէք — Զեռքը ծրար մը, բան մը կա՞ր։

Ֆրան — Ա՜, կ'երեւի թէ դուք դեռ բան մը չէք գիտեր. աս ալ մէկ։

Ալֆ (Ցաւեն Ալֆոնսին) — Լեզուին տակը բան մը կայ։

Ալէք — Ֆրանսուա, ի սէր բարեկամութեան, տեսածդ կամ լսածդ մեզի պատմէ՛։

Ֆրան — Եթէ պատմեմ, կը խոստանա՞ս ինծի հինգ նաբոլէոնի չափ փոխառութիւն մը ընել։

Ալէքս — Կը խոստանամ։

Ֆրան — Սիրուհիդ վրայ երդում մը ըրէ։

Ալէք — Ո՛հ, մ'երկնցնե՛ր, կուտամ ըսի քեզի։

Ալֆ — Կուտայ, կուտայ, ես ալ կը վկայեմ։

Ֆրան — Ուրեմն աչքդ լոյս, հօրեղբայրդ քեզի 60 ոսկի զրկեր է, Ֆրէտերիգ՝ այն 60 ոսկիի կուսքոն ձեռքը նամակատունէն ինձմէ առաջ մտկնեցաւ։

Ալէքս — Հէ՞, իրա՞ւ կ'ըսես, ուրեմն անգամ մ'ալ պիտի համբուրեմ զքեզ։ (Կը համբուրէ)

Ֆրան — Վերջապէս, գործերնիս կարգի մտաւ։

Ալէք — Բայց Ֆրէտերիգը ո՞ւր մնաց, ո՛հ, մէյ մը սա՛ ոսկիները տեսնէի՛, ուրախութենէս հիմա պիտի թռցնեմ։

Ֆրան — Չելլես առանկ տխմարութիւն մը ընես. եռքը

հինգ նաբուլէոնը ո՞ւսկից պիտի առնեմ։

Ալֆ — Ասկէց զատ, քեզ ո՞վ պիտի կապէ։

Ալէք — Սա ունպիտանութիւն նայեցէ՛ք, մինակ ինքզինքին կը մտածեն, զիս չեն մեղքնար։ Ա՛հ, Ֆրէտէրիգ, ո՞ւր մնացիր։ (Ֆրեդերիգ կը մտնէ, կուրծքս ձեռքը)

ՏԵՍԻԼ Գ.

ՆՈՑՆՔ ԵՒ ՖՐԷՏԷՐԻԳ

Ֆրէտէրիգ — Եկայ, եկայ։

Ալէք — Սատկնե՛ր։

Ֆրէտ — Հրամմեցէ՛ք։ (Կուտայ)

Ալէք — Ո՛հ, շնորհակալ եմ, (Կ'սկսի հանրել)

Ֆրէտ — Ձեզի բան մը ըսե՞մ, բարեկամնե՛ր, եթէ վարժարանի մէջ ընկերներս մեր ատանկ մեռնել կեղծելնուս շնորհիւ ատակ ճարած ըլլալնիս իմանան, տարի մը չանցած՝ վարժարանին մէջ ողջ մնացած ուսանող մը չը պիտի գտնուի. ատենքն ալ իրենց ծնողքներէն ատակ քաշելու համար պիտի մեռնին։

Ալէք — Ճիշդ է, վաթսուն հատ կարմրուկ ոսկիներ, բայց անգամ մը մտածեցէք, եղբարք, ի՞նչ ատելնան զօրութիւն ունի սա՛ կլորիկ մեռապը, որ անմիջապէս լուսաւորից այս մութ սրտերը։

Ֆրան — Այո՛, ճշմարիտ է, միանգամայն մեր սրտերուն երջանկութիւն պատճառեց։

Ալէքս — Ուրեմն կ'առաջարկեմ որ երեքս ալ ծունգի վրայ եկած, փառաբանենք այս ատենապօր մեռապը (Գսակը աթոռին վրայ դնելեն եռքը ամոր ատոչին ծունգի վրայ՝ կ'ըսէ)

Քեզի համար սիրով զոհեմ կեանքս, հոգիս, ո՛ տէր գրամ,
Գթա՛ ինձի և ողորմէ՛, եկո՛ւր, մտիր դու իմ գրպանս։
Աշխարհի մէջ մարդը շարժող մեքենան միայն դու ես,
Գլուխ ցորեկ պաղատիմ քեզ որ չի պակսիս իմ գրպանէս։

Ատենքը (Միաբերան) — Քի քո է կարողութիւն, քո է զօրութիւն, ո՛ կլորիկ մեռապիկ,
Այցելէ՛ մեզի գէթ տարին հեղ մը, մե՞նք ենք քու գերիդ։

Ֆրէ (Նոյնպէս)— Քու շնորհիւդ գոց դռները կը բացուին,
Թալի՞նկ ձայնէդ՝ անդամալոյծք իսկ կանգնին.
Տգեղը՝ գեղանի, խռֆածը՝ սիրուն, շնորհիւրդ կ'ըլլան.
Ակռանին թափած, փտացած աղջիկներ ատուր էրկան տիրանան։

Ամենքը — Չի քո է կարողութիւն, եայլն։

Ալֆ (Նոյնպէս) — Դու ես որ անմիտը խելացի ցուցնես,
Զոր խօսք չգիտցողը գիտուն հռչակես.
Ճշմարտախօս անկուտին ականջ կը գոցես,
Զաժեմը աժեմին կը նախադասես։

Ամենքը (Նոյնպէս) — Չի քո է կարողութիւն, եայլն։

Ֆրան — Է՛, պարոններ, աղօթքնիս ըրինք, ո՞ւր է սա մեր հինգ նաբալէոնը։

Ալէք — Զգէ՛, հոգիդ սիրես, կատակի ժամանակ չէ։

Ֆրան — Ի՞նչպէս կատակ, յիշէ խոստումդ։

Ալէք — Ա՛ռ, ա՛ռ, մ՝երկնցներ, ու գնա՛ օրիորդները հոս կանչէ։

Ֆրան — Օրիորդները ո՞ւր են։

Ալէք — Ո՞ւր պիտի ըլլան, ներսի սրահը։ Ամենքս ալ հաւաքուինք ու ընելիքնիս որոշենք։ Ա՛լֆօնս, դուն սա երեք ոսկին ա՛ռ, ըմպելիքներն ու մրգեղէնները պատրաստէ, դուն ալ Ֆրէտերիք, նուագածուները սակարկէ։

Ֆրէ — Այս ամենը աղէկ, բայց քեզի բան մը պիտի ըսեմ, հօրեղբօրդ ինձ գրած նամակը աճապարանօք կարդալու ես, քանի մը տող յետ գրութեանը դեռ չեմ կարդացած. տեսնենք ի՞նչ է գրեր։

Ալէք — Կարդա՛ նայինք։

Ֆրէ (Նամակին յետ գրութեանը աչքէ անցուցեալ եսքը)—Ա՛յ, ա՛յ, ա՛յ, տեսա՞ք մի փորձանքը, կեցէք, օրիորդներ մի՛ կանչէք, որո՞ւ մտքէն կ՝անցնէր, խնդիրը կնճռոտեցաւ։

Ֆրան — Խեր ըլլայ, ի՞նչ կայ որ...

Ալֆ — Կարդացէ՛ք որ հասկնանք։

Ֆրէ — Հօրեղբայրդ կ՝իմացնէ որ այսօր ժամը 9ին հոս գալով, յուզարկաւորութեանդ հանդէսին ներկայ պիտի գտնուի, և իր վերջին հաճոյքը պիտի դրուշմէ եղեր քու պաղ ճակատիդ։

Ալէք — Տգայութիւն չուզեր, Ֆրէտերիք, կատակի ալ ատեն չէ. ոչ եղած ատենս զիս չի համբուրողը մեռնելէս ետքը դիակս կը համբուրէ՞։

Ֆրէ — Ահա դուք ալ նայեցէք թէ ո՞ւր է ըսածս։ (Հեգեյով) հո այր մէն՝

Ամենքը — Հա՛մ.

Ֆրէ — Թէն այր

Ամենքը — Բոյը,
Ֆրէ — Համբոյը։
Ամենքը — Համբոյը։
Ալէք — Է՛յ, հիմա ի՞նչ պիտի ընենք։
Ֆրէ — Իրաւ որ ես ալ չգիտեմ։
Ալֆ — Ինդալս փորս ճնաց։
Ալէք — Ժամը քանի՞ն պիտի գայ, ըսէք։
Ֆրէ — Իննին։
Ֆրան — Այս հաչուով, հիմակ ուր է նէ կուգայ։
Ֆրէ — Բայց ասոր ճար մը գտնելու ենք։
Ալֆ. — Ինծի հարցնէք նէ՝ իրաւցնէ մեռնելէ ուրիշ ճար չի կայ։
Ալէք — Ի՞նչ, 60 ոսկիի համար մեռած ունի՞ս մի։
Ալֆ — Դուն գիտես, բայց գոնէ մեռած ձեւանալու է, ապա թէ ոչ, խարդախութիւնը մերկապարանոց կ՚ըլլայ։
Ֆրէ — Անանկ է, ուրիշ ճար չի կայ, սուտ մեռել պիտի ըլլաս. արդէն որոշուած ալ ասանկ չէ՞ր։
Ալէք — Բայց եթէ հօրեղբայրս հիւանդութիւնս հասկնալու համար զիս դարմանող բժիշկը տեսնել ուզէ...
Ֆրան — Ֆրէտէրի՛գ, դուն դասերուդ մէջ մեզմէ յառաջադէմ ես, շինծու մօրուք մը ու ծայրերը երկայն վիզոց մը դնելով Լատինիրէնի պէս քանի մը բառ կ՚արտասանես, Ալէքսին դարմանող բժիշկը եղած կ՚ըլլաս. ես ալ, թաղումը կատարող քահանան կ՚ըլլամ, ասանկով, մարդուկին ձեռքէն ինչ փրցունենք նէ՝ շահ է։
Ալֆ. — Է՛, ես ի՞նչ պիտի ընեմ. ինծի ալ պաշտօն մը։
Ֆրէտ — Դուն ալ դեղագործ կը ձեւանաս ու տուած դեղերուդ փոխարէնը կը պահանջես։
Ալէք — Արդէն բաւական ալ Լատինիրէն գիտես։
Ֆրան — Ապրինք, բարեկամներ, որոշուեցաւ։
Ալէք — Ժամը քանի՞ն է արդեօք։
Ֆրէ (Նայելով) — Ճիշդ ութ ու կէսն է. կէս ժամէն մարդուկնիս հոս կը հասնի։
Ալէք — Ուրեմն Ֆրանսուա, գնա՛յ մեր բարեկամուհիները վարպետութեամբ մը հաւատցէ որ հիմակու հիմա հոս չի գան։
Ֆրան — Դուք անհոգ եղէք, ահա կ՚երթամ. (Կը մեկնի)։
Ալէք — Հիմա մենք ի՞նչ պիտի ընենք։
Ֆրէ — Ընելիքնիս յայտնի է. ուս սեղանին վրայ պիտի

երկննաս, մեռել ձեւանաս, շունչդ պիտի բռնես, չի պիտի հազաս, չի պիտի փռնգտաս. ճերմակ սաւանի մէջ քեզ կը փաթթենք, գլխուդ վերեւն ալ ճրագ մը, եղաւ գնաց. ծերուին ալ պիտի կլլէ։

Ալէք — Ուրեմն շուտ ըրէք, ժամանակը կ'անցնի։

Ալֆ (Սաւաներ Ֆրեսերիգին տալով) — Ա՛ռ, նայինք։

Ֆրէտ (Ալեքսիին) — Պառկէ նայինք. (Ալեքսի սեղանին վրայ կը տարածուի, սաւանով կը ծածկեն, գլխուն վերեւն ալ վառուած ճրագ մը կը դնեն)։

Ալէք — Բայց ես հոս պիտի խեղդուիմ։

Ֆրէ — Բան չես ըլլար. հա՛, կեցիր, կարեւորը մոռցանք, քիչ մը բուրոյով սա երեսիդ կարմրութիւնը անյայտացնելու ենք։ (Բուրա կը խառնէ)։

Ալէք — Հէ... հէ... հէփշո՜ւ։

Ֆրէ — Ա՛, այդ չեղաւ, միթէ մեռելը կը փռնգտա՞յ։

Ալէք — Թը՛շուառական, այդ փոշին եթէ քու հանգուցեալ մեծ մօրդ քիթին ալ թխմեն կը փռնգտայ։

Ֆրէ — Լռէ՛, ատքի ձայն կայ, ինքն ըլլալու է, պառկէ՛, մ'երերար։ (Լալով) ա՜հ, հի՛ւ, հի՛ւ։

ՏԵՍԻԼ Ե.

ՆՈՅՆՔ ԵՒ ՖՐԱՆՍՈՒԱ, ԵՏՔԸ ՄՈՒՋԱՐ

Ֆրան (Լալով կը մտնէ) — Ա՜հ, հի՛ւ, հի՛ւ, հի՛ւ.

Ֆրէտ — Հէ՞, ո՞վ է։

Ալէք (Նստելով) — Հէ՞։

Ֆրէ — Ի՞նչ գոռում գլուխ մարդ ես, Ֆրա՛նսուա. սիրտս փրթաւ. քու ըլլալդ չիմացնե՞ս։

Ֆրան — Ի՞նչ գիտնամ, եղբայր, ներս մտած ատենս լալու ձայնելնիդ առնելովս կարծեցի թէ ծերուկը եկեր է։

Ալէք — Օրիորդները համոզեցի՞ր։

Ֆրան — Մինչեւ որ համոզեցի, խերս անիծուեցաւ. բայց եթէ ուշանաք՝ իրենք հոս պիտի գան։

Ալէք — Չը՛ըլար, չը՛ըլար. ծերուկին հոս եղած ատենը եթէ անոնք վրայ գան, կը խայտառակուինք։

Ֆրան — Անհոգ եղիք, ես զիրենք կը համոզեմ։

Ալֆ (Վազելով) — Լռեցէ՛ք, մարդուկնիս եկաւ. ասնդուխէն վեր կ'ելլէ... ամեն մարդ իր գործին. (Ֆրանսուա կը մեկնի), Ալէ՛քսի, շուտ ըրէ, պառկէ՛, շունչ մ'ա՛ռներ, (Ֆրեսերիգի հետ կուլայ) հի՛ւ, հի՛ւ, հի՛ւ.

Մուզար (Լալով կը մտնէ) — Ա՜հ, հի՜ւ, ի՜ւ, ի՜ւ, խեղճ եղբօրորդիս, արդեօք ի՞նչ վիճակի մէջ պիտի տեսնեմ զինքը. աս տարիքիս մէջ, աս կսկիծը տեսնելո՞ւ էի։ Ա՛հ, ինչո՞ւ զիս աշխարհիս երեսը մինակ կը թողուս, դու որ իմ միխիթարութիւնս էիր։

Ֆրէտ — Տէ՛ր իմ, միխիթարուեցէ՛ք, այդչափ կսկիծը ցաւալի արկածի մը պատճառ կրնայ ըլլալ ձեզի համար։

Մուզ — Ո՛հ, ձգեցէք որ քիչ մը լամ. խե՜ղճ եղբօրորդիս, աս ի՞նչ ծանր հարուած էր որ իմ սրտիս տուիր. (Մէկուսի) թերեւս ասոնք իր բարեկամներն են, (Բարձր) բարի լոյս ձեզ, պարո՛ններ։

Ֆրէտ — Բարի իրիկուն. պարո՛ն։

Մուզ — Առա՞ւ է մի իրիկուն. խելքս գլուխս չէ որ։

Ֆրէ — Երկու օր է որ մեր գլուխն ալ խելք չի մնաց, այս տղուն մահը անմխիթար կերպով խոցոտեց ամենուս սիրտը։

Մուզ — Աս տարիքին մէջ, այնչափ ուսմունք ստացեալէն ետքը պէ՞տք էր որ մեռնէր. դեռ տասն օր առաջ ինձի նամակ գրեց, հիւանդութիւն մը՝ բան մը չունէր։

Ֆրէ — Իրաւունք ունիք, պարոն, բայց պէտք է գիտնալ թէ հիւանդութիւն ըսուածը ամուսն օրուան չի նայիր, մէկէն ի մէկ կուգայ ու կ'առնէ կը տանի։ Թէպէտ եւ զինքը ազատելու համար մեր ձեռքէն եկածը ըրինք, բայց նենգաւո՛ր մահը մեր ամեն ջանքերը ոչնչացուց։

Մուզ — Ըսել է որ սաստիկ իջուածք մըն էր։

Ֆրէ — Ո՛չ, իջնելու եղնելու բան մը չունէր. ծառանիդ՝ հանգուցեալին թէ սրտակից մտերիմը եւ թէ բժիշկն ըլլալու, վայրկեան մը իսկ քովէն չի հեռացայ։

Մուզ — Ի՞նչ էր իր հիւանդութիւնը։

Ֆրէ (Շուարած) — Բան... ինքը... բանը, այսինքն գիր գրած ատենը յանկարծ ջիղերը բռնուեցաւ, տենդային հիւանդութեան մը առաջքն առնելու համար անմիջապէս ոտքերը տաք ջուրը դնել տուի։

Մուզ — Ո՛հ, սոսկալի՞ բան։

Ֆրէ — Աստ վրայ՝ քիչ մը աչքերը բացաւ, ո՛հ, երանի՞ թէ չի բանար, վասն զի ակուռ սոսկալի ցաւեր զգալ ու մարդուս սիրտը գալարող ազիկաւոր ձայներ արձակել. վերջապէս, ժամը... ժամը...

Ալէք — Եօթնին։

Ալֆ — Ուրթնին։

Ֆրէ — Իննին հոգին աւանդեց։

Մուզ — Վա՜հ, դժբաղդ եղբօրորդիս. հի՜ւ, հի՜ւ, հի՜ւ. բայց պարո՛ն, քանի որ դուք բժիշկ եմ կ'ըսէք, անշուշտ իր հիւանդութեան ինչ ըլլալը գիտէք. ըսէ՛ք, ինչէ՞ն մեռաւ։

Ֆրէ — Ինչէն պիտի մեռնի, այս հիւանդութեան Լատինա-Յունարէն անունը՝ «Ամուրոս, անկուտիոս, անսարծաքիս» է։ Իր ըղեղին մէջ խել մը Քուրտ յիքօանեռում, ազուա իքամ կոչուած ջղերուն թուլութենէն յառաջ կուգայ տենդը. ահա դեղագործն ալ այս պարոնն է. կրնաք իրեն հարցնել, այնչափ զօրաւոր դեղեր տուի, բայց թշուառական հիւանդութիւնը ամենեւին կարեւորութիւն չտալով անոնց՝ իւր կամակորութեամբը յաղթեց։

Մուզ — Անշուշտ թէ՛ զօրաւոր և թէ սուղ դեղեր։

Ալֆ — Ո՛չ, ընդհակառակը խիստ ածան և օգտակար դեղեր. եթէ անոնց անունը լսէք, դուք ալ հիւանդանալու փափաք մը կ'ունենաք։

Մուզ — Լսուած չընէ. եթէ ես հիւանդնամ, քիչ մը կակժերակ (խրեարշենպին մանուշն) կ'առնեմ.

Ֆրէ — Ադկէ ալ տուինք հանգուցեալին, բայց...

Ալֆ — Գրեխ ալ տուինք, արիւն ալ առինք, բայց ամենեւին օգուտ մը չըրաւ։

Ֆրէ — Հիւանդութիւնը խիստ զօրաւոր ըլլալուն՝ զմեզ հոս ձգեց, գնաց. ա՜հ, հի՜ւ, հի՜ւ, հի՜ւ։

Մուզ (Կուլայ) — Հի՜ւ, հի՜ւ, գոնէ դուք մի՛ լաք, հի՜ւ։

Ալէք (Պառկած տեղէն) — Հէփշո՜՛ւ։

Մուզ — Հէ՞, ադ փռնգտացողը ո՞վ էր։

Ֆրէ — Ես էի, պարոն։

Մուզ — Ուրիշ խեր ըլլայ։

Ֆրէ — Շնորհակալ եմ։ (Կամաց մը Ալէքսիին) ի՞նչ ապուր կ'ուտես, տղայ, փռնգտալու առի՞նը գտար։

Ալէք (Կամաց) — Եղբայր, ի՞նչ ընեմ. քիթս սարսափելի կերպով կը կիտայ, հէփշո՜՛։

Ֆրէ (Շուարելով Մուզարի կ'ըսէ) — Խեր ըլլայ, պարոն։

Մուզ — Ի՞նչպէս, փռնգտացողը ի՞ս էի։

Ալֆ — Այո՛, պարոն, դուք էիք։

Մուզ — Շատ բան, շատ բան, շնորհակալ եմ. այն աստիճան շուարեր եմ որոխս ցաւէն որ ըրածս չգիտեմ։

Ալֆ — Բնականաբար այդպէս կ'ըլլայ, տէր իմ։

Ալէք — Հէփշո՛ւ։

Ֆրէ (Կամաց) — Ա՛յ գեռին անցնի քիթդ. (Ալֆօնսին) անցած ըլլայ, բարեկամ։

Ալֆ — Շնորհակալ եմ։

Մուզ — Այս անգամ փոնգտացողը գո՞ւք էիք։

Ալֆ — Այո՛, պարոն, ես էի։

Մուզ — Ուրեմն խեր ըլլայ։

Ալֆ — Շնորհակալ եմ, պարոն։

Մուզ — Ո՞ւր է, դեղերուն հաշուեցուցակը չի տեսանք տակաւին. ես պարտք չեմ սիրեր։

Ալֆ — Բայց .... տէր իմ .... ո՛չ, ո՛չ։

Մուզ — Է՛, է՛, ես այնտեղուանքը չեմ. եղբօրորդիս չեմ ուզեր պարտքով պառկեցնել, հիմա պիտի վճարեմ։

Ալֆ — Բայց ես իմ սրտակից բարեկամիս համար ըրած ծախքերս թերանս անգամ առնել չեմ ուզեր։

Ֆրէ — Ո՛չ, միւսիւ Ալֆօնս, այնպէս չէ. (Կամաց) ի՞նչ ապուր կ'ուտես կոր, (Բարձր) թողէք որ պարոնը ուզածին պէս ընէ. ատանք հին մարդիկներ են, մեզի պէս պարտական ճնալէ չեն ախորժիր։

Ալֆ — Այդ ուրիշ խնդիր. ուրեմն պարոնին կամքը յարգելու եմ։ Ահաւասիկ դեղօրէից հաշուեցուցակը, բայց խնդրեմ իտալերէն է, եթէ կը հրամայէք՝ կարդամ։

Մուզ — Ձեզի ձանձրութիւն չըլլար նէ՝ կարդացէք, եղբօրորդուս ինչ տեսակ դեղերով մեռնիլը կ'ուզեմ հասկնալ։

Ալֆ — Շատ ազէկ պարոն, ուրեմն մտիկ ըրէք (Կարդալով) «Բարիզի մէջ առաջին կարգի դեղարան մը ըլլալով, 1863ին արծաթ և 1866ին ոսկի շքադրամով վարձատրուած համբաւաւոր Պ. Ալֆօնս տը Ջըմպլնի, Հօգման Եուամանն և Հօֆմանի կողմէ պատրաստուած դեղերը որ....

Մուզ — Ներեցէք, պարոն դեղագործ, այդ երկայն յառաջաբանը անցէ՛ք, դեղերուն անունը ըսէք։

Ալֆ — Ահա կը սկսիմ. առաջին անգամ «Սքուա սիջիլիզի սօֆար եւ մեՆբա բօլօրա, նաև եիեաՆֆաՆի բօլօրա բօլօսում, բօլօր թեսքի տել բաբօմատամամ, տուտիչի, զուՆտիչի, սեսիչի ....

Մուզ — Սէտլի՞ճ ալ տուիք։

Ալֆ — Այո՛, պարոն, քանի որ սէտլիճը կը ճանչնաք, անոր ի՛նչ աստիճանի զօրաւոր դեղ մը ըլլալն ալ անշուշտ գիտէք. անկէ զատ տուինք նաև Ազուա միզերալիս, աքու

պի չինեալիս, բորէ բորբոր բորում բրէ, չիբիբա բում եւ տում, զոզտում տի զոզտում, բոլորէ տի բոլորմում....

Մուզ — Ա՛ս ո՞րչափ մամ դրեր էք գեղերուն մէջ։

Ալֆ — Տօգթօրին հրամանը սատանկ էր։ Մոխկ ըրէք, նոյն օրը իրիկուան դէմ Պարոն տօքթէօրին 11րդ գեղագիրն էր. Ռենթգէնի, ռէնթի, ռէչուցի, պրապիչի, տիշեմս, տի գոռ, տի գուար, վերջը չիգար, ուվիռ, մուվիռ, չուտուիր, խեյֆ չիասցիր

Մուզ — Հէ՛, հէ՛, ի՞նչ ըսիր։

Ալֆ(Շարուցակելով) — Մեցեսալէ ֆերմիզ, բեցթուռա, մարտիս, ռասէչի, ռասէչսի, մումեջէ, մումիջիսի, ռասիեոր, ռասացասի, ռաս օսեալ, ռաս աւացաց....

Մուզ — Աղբար, եղբօրորդիս այս ամենը կլմ՞ց։

Ալֆ — Ուզեր չուզեր պիտի կլէր։

Մուզ — Շատ բան, ի՞նչ զարմանալի անուններ։

Ֆրէ — Մի՛ զարմանաք պարոն, այս ամենը նոր գտնուած գեղեր են։

Մուզ — Ինչ որ է, գումարը ըսէ՛։

Ալֆ — Շատ աղէկ, գումարը որ լատիներէն չէ, պիտի կրնաք հասկնալ. գրեթէ տպրուկ, օշարակ, կակաչերուկ, փոշի, մոշի այլովքն հանդերձ 575 ֆրանք 75 սանթիմ։

Մուզ — Խե՜ղճ Ալէքսիս. աղէկ ա՛, պարոն տօքթօր, այսչափ դեղը շատ չէ՞ր իրեն համար։

Ֆրէ — Ընդհակառակն քիչ գալուն համար մեռաւ. ա՜հ, հի՜ւ, հի՜ւ, հի՜ւ։

Մուզ — Մի՛ լա՛ք, մի՛ լա՛ք, իմ սիրաս ալ թունդ մի՛ հանէք. (Ալֆոնսին սակ տալով) *փառք Աստուծոյ որ խլըզճահար դեղագործի մը հանդիպեցանք, եթէ անպուտ և անկարկիր մէկը ըլլար, ստկուած սոխի պիտի դարձնէր զիս։*

Ալֆ — Երանի՜ թէ ինքը ողջ ըլլար և ես տանք չառնէի։

Ֆրէ — Ի՞նչ օգուտ, բարեկամս, մխիթարուելու ենք։

Ալֆ — Ո՛հ, գոնէ վերջին անգամ զինքը տեսնեմ. հի՜ւ։

Ֆրէ (Կամաց) — *Ուրախութենէդ կուլաս, այնպէս չէ՞։*

Ալֆ (Նոյնպէս) — *Լռէ՛, 25 նապոլէոն բրցուցի։*

Մուզ — Իրաւ հաւատարիմ բարեկամներ են եղեր։

Ալֆ — Մնաս բարով սիրելի Ալէքսի, ընդունէ՛ իմ յետին ողջոյնս. (Մուզարի) *ձեր հրամանատը կը մեկնիմ, պարոն։*

Մուզ — Ա՛հ, շնորհակալ եմ, հի՜ւ, հի՜ւ։ (Ալֆ. կը մեկնի)։ *Ա՛ս ազնիւատ տեսարանին առջեւ մարդ եղեր ու դիմացիր,*

հիւ, հիւ։ Ո՛հ, ներեցէք Պ. տօքթօր, ձեր այցելագինը չի մոռնանք. առէք ոտ քսակը, կը յուսամ թէ գոհ կը մնաք։

Ֆրէ — Ի՞նչ կ՚ընէք, պարոն, ես իմ բարեկամիս մատուցած փոքրիկ ծառայութեանս փոխարէն բան չեմ ուզեր։

Մուզ — Աղէկ. բայց դուք ալ արհեստը ձրի չէք տարվէր։

Ֆրէ — Շատ իրաւացի են ձեր այդ խօսքերը. արհեստը տարվելու համար շատ ծախք ըրած ենք, բայց ի՞նչ կ՚ըլլայ, ես իմ բարեկամիս համար 20 այցելագին, այսինքն 20 ոսկի չառնելով չեմ կրծանիր։

Մուզ (Մելուսի) — Ըսել է որ 20 ոսկի տալու է. (Բարձր) կը յուսամ թէ առոր մէջ 20 ոսկի պիտի գտնէք, բայց հ-թէ...

Ֆրէ — Հոգ չէ, պակասածը հոն ալ կրնաք զրկել։

Մուզ — Եղբօրորդւոյս ընկերներէն Պ. Ֆրէտերիգը անգամ մը տեսնել կ՚ուզէի, որ ինձի նամակ մը զրկած էր։

Ֆրէ — Այն անձը այս միջոցիս յուզարկաւորութեան հանդէսին կարգադրութեամբը զբաղած ըլլալուն, աւա՜ղ, չպիտի կրնաք զինքը տեսնել։

Մուզ — Մե՞ղք որ զինքը չի տեսած պիտի մեկնիմ, իմ վերջին համբոյրս տարտարոզդ Ալէքսիս ճակատին դրոշմելէս հետքը, երկաթուղին չփախցնելու համար պէտք է որ ճամապարհեմ։ Ուստի Պ. Ֆրէտերիգը տեսնելով՝ իմ կողմէս բարեւ խօսեցէք, շնորհակալութիւն յայտնեցէք, ու թէ որ եղբօրորդիս մանչ մունի պարտքեր ըրած է, ինձի նամակաւ մը թող իմացնէ որ վճարեմ, ասկէց զատ, անոր ունեցած կարասիները գիրքերը թող ինձի զրկէ, իր յիշատակին համար պիտի պահեմ ու միխիթարուիմ. ուրեմն ապնիւ պարոն, ծղնէ ինձի որ վերջին համբոյրս դրոշմեմ։

Ֆրէ — Եկէք տէր իմ, թեւս մտէք, բայց կ՚ապաչեմ, ինքզինքնիդ բռնեցէք որ գէշութիւն մը չպատահի ձեզի։

Մուզ — Ա՜հ, ինձի համար եղաւ ըլլալիք (Կը մօտենայ), ո՛, իմ երկու աչքերուս լոյս Ալէքսիս, ի՞նչպէս չի լսեր քու երիտասարդութիւնդ, գեղեցկութիւնդ, ուսմունքդ, (Կը համբուրէ) հոգիդ թող հանդարտի, քաւեալ լիցին քեզ մեղք քո, ամեն ըրածներդ կը նեղեմ, յաւիտենականութեան մէջ հոգիդ արդարներուն դասակից ըլլայ, մի՛ մոռնար զիս, Ալէքսի՛ս...։ Աղէկ միտքս եկաւ, Պ. տօքթօր, երկաթուղին ժամը քանիին կը մեկնի։

Ֆրէ — Ուրթ ու կէսին. 10 վայրկեան ժամանակ ունիք։

Մուզ (Իրար անցած) — Տասը վայրկեա՞ն մի, ուրեմն մեկնիմ, բայց ա՛հ, ի՞նչպէս պիտի բաժնուիմ այս դաղաղէն։

Ֆրէ — Թող երկինք մխիթարէ զձեզ, պարոն, ձեր յոյսը անոր վրայ դրէք, երկաթուղին չի փախցնելու համար ալ աճապարեցէ՛ք, երթաք բարեաւ. շատ մի՛ լաք, մի՛ ողբաք, ձեր եղբօրորդին հիմա երկնից մէջ արդարոց բնակարանը հանգչած է. երթաք բարեաւ։

Մուզ — Շնորհակալ եմ, Պ. տօքթոր, շնորհակալ եմ. չի մոռնաք՝ իմ բարեւներս Պ. Ֆրէտերիգին իմացնել։

Ֆրէ — Շատ աղէկ, շատ աղէկ, բայց կ'ուշանաք։

Մուզ — Ահա կ'երթամ։ Տեսա՞ք, պիտի մոռնայի, իմ կողմէս աղաչեցէք Պ. Ֆրէտերիքին որ օր մը իր այցելութեամբը զիս պատուէ։ (Անուպարանոցով կը մեկնի)։

Ալէք (Տեղեն ցատկելով) — Վերջապէ՞ս, գնա՞ց։

Ֆրէ — Այո՛, գնաց. (Ալէքսի թրանցլայտ ըսելով կը պարէ), ա՛յ, ա՛յ, ա՛յ, պառկէ՛, պառկէ, մարդը հոս դարձաւ։ (Ալէքսի կը ծուարի եւ հակառակ կողմը կը պառկի) ա՜հ, հի՜ւ, հի՜ւ։

Մուզ (Կը մտնէ)— Ադ ի՞նչ է, դուք տակաւին կուլա՞ք։

Ֆրէ — Ո՛հ, քանի որ իր դէմքը կը դիտեմ, չեմ կրնար արցունքս բռնել. բայց դուք ինչո՞ւ վերադարձաք։

Մուզ —Քթախոտի տուփս հոս մոռցեր եմ։

Ֆրէ — Առէք ուրեմն և ճամբէն մի՛ մնաք։ (Կուտայ)

Մուզ — Հի՜ւ, հի՜ւ, գոնէ մէյ մ'ալ համբուրեմ զինքը, նոյնպէս և ձեզ (Երկուքն ալ համբուրելեն ետքը կը մեկնի)։

Ֆրէ — Վերջապէ՞ս կորսուեցաւ։ Ե՛լ նայինք, պարոն։

Ալէք — Ոչ, ոչ, մինչեւ որ աղէկ մը չի հեռանայ, տեղէս չեմ երերար։

Ֆրէ (Պատուհանեն նայելով) — Բայց ահա կառքը նստաւ ու մեկնեցաւ։

Ալէք — Ուրեմն աչուընիս լոյս, նորէն աշխարհք եկայ։

Ֆրէ — Այո, բայց միտքս բան մը եկաւ, հիմա որ դուն մեռած ես հօրեղբօրդ համար, ասկէ ետքը ի՞նչպէս պիտի յաջողիս անոր ձեռքէն ատակ քաշել։

Ալէք — Շատ դիւրութեամբ. երբ նա իմանայ թէ մեր այս ըրածը իրեն համար խաղ մ'էր և ես ամուսնացեր եմ Ֆլորինիս հետ, կաթուած պիտի իջնէ սրտին, ու ինքը որ արդէն հիւանդոտ ծեր մ'է, շուտ մը անդիի աշխարհք պիտի

ճամբորդէ. իր ձգելիք հարստութեան միակ ժառանգորդը ես եմ, հետեւաբար պիտի հարստանամ։

Ֆրէ — Ա՛յ չարաճճի, չըսե՞ս, միշտ կատուի պէս չորս ոտքի վրայ պիտի իյնաս (Ներսէն աղջկանց ձայները կը լսուին)

Ալէք — Սա ինչ ազմուկ է։

Ֆրէ (Նայելով) Մերիններն են, հոս կուգան։

ՏԵՍԻԼ Զ.

ՆՈՅՆՔ, ԱԼՖ., ՖՐԱՆ. ԵՒ ՕՐԻՈՐԴՔ, ԵՏՔԸ ՄՈՒԶԱՐ

Ալֆ — Ահա եկանք. անցած ըլլայ, միւսիւ Ալէքսի։

Ալէք — Շնորհակալ եմ։

~~Ֆլորին — Կը շնորհաւորեմ այս յաջողութիւնդ, Ալէքսի։~~

Ալէք — Շնորհակալ եմ, Ֆլորինս, քու սիրոյդ համար մինչեւ անգամ մեռայ։

Ֆրան — Օն, ուրեմն, ի՞պար։

Ամենքը — Այո՛, ի պար։

Ֆրէ — Ավանթի՛, մուզիկ։

(Նուագածուները գաւրիլ մը կը զարնեն, ամենքն ալ կը սկսին պարել, այն միջոցին Մուզար կը մտնէ եւ մեջտեղը կը կենայ. պարողները յանկարծակիի եկած, Ալէքսին չի ցուցնելու համար զայն կը շրջապատեն)։

Մուզ — Ինչո՞ւ կեցաք, պարոններ, շարունակեցէ՛ք. ո՞ւր է նայիմ սա անդիի աշխարհք ճամբորդող սրիկան (Կը փնտռէ կը գտնէ ու ականջէն քաշելով) հո՞ս ես պարոն, ողջնցա՞ր, թշուառական, հիմա ի՞նչպէս ձեռքէս պիտի ազատիս։

Ալէք (Ծունկի վրայ) — Ա՛հ, սիրելի հօրեղբայրս, գթութի՛ւն, գթութի՛ւն։

Մուզ — Լռէ՛, թշուառական, լռէ՛. ալ ասկէ ետքը քու հօրեղբայրդ չեմ. դուն ինծի համար մեռած ես. սուտ մեռել ըլլաս, այս տարիքիս մէջ զիս այնչափ հեռուներէն մինչեւ հոս բերիս, սատակէ հանիս ու մօրուքիս խնդաս, (Ամենքուն) ես ձեր խաղալի՞քն եմ, թշուառականներ, հիմա արդարութեան պիտի յանձնեմ զձեզ։

Ֆրէ — Ո՛հ, տէր իմ, շնո՛րհ, գթութի՛ւն։

Մուզ — Անդին կորսուէ՛, կոշիկիս կտորը, տօգթօր, հէ՞ք քիթիդ ակնոց մը անցանելով կարծեցիր թէ պիտի խաբե՞ս զիս, բաղդախնդիր թշուառական։

Ալֆ — Ո՛հ, տէր իմ, ներողութի՛ւն, ներողութի՛ւն։

Մուզ — Վա՛յ, վա՛յ, վա՛յ, քսակահատ թշուառական,

գո՞ւն ալ մի հաս ես, ո՞վ կոկորդիլոս, ագռաւ մինչալիս, որը չինալիս, վիզիթալիս, բատիշի սէմա, կ'ուտուի, չուտուիր, խելք չի հասնիր, վերջը չիգար. հէ՞, քեզի թշուառական, նզովից ծնունդ քեզի, ըսել է որ դուք առաջուց խօսք մէկ ըրած զիս սօթտելու ելեր էք. աղէկ, աղէկ, հիմակ ալ պատրաստուեցէք պատիժնիդ կրելու։

Ամենքը — Ո՛հ տէր իմ, գթութիւն։

Մուզ — Անդին կորսուեցէ՛ք։

Ալէք — Քանի որ այնչափ անգութ կ'ըլլաք մեզի, գոն իմ նշանածիս գթացէ՛ք։

Մուզ — Ի՞նչ, նշանածդ մի՛, ադ ի՞նչ ըսել է։

Ալէք — Ահա ~~երեսքնիս~~ ալ ծունգի վրայ եկած, կ'աղաչենք (Ֆլորինի հետ ծունգի վրայ)։

Մուզ — Ի՞նչ ըսիր, ի՞նչ, չհասկցայ։

Ալէք — ~~Իմ նշանածս է ասիր~~. գթա՛ մեզի, հօրեղբայր։

Մուզ — Վա՛յ, առանց ինծի հարցնելու նշանուե՞ր ես ալ, շո՛ւտ, ատիկան մը։

Ամենքը (Աղաչելով) — Մի՛ ընէք, պարոն, գթացէ՛ք։

Մուզ — Չէ՛, անդին կորսուեցէ՛ք։

Ալէք — Էհ, քանի որ դուք այդչափ անգութ կ'ըլլաք, ես ալ այս վայրկեանիս ապրելէ պիտի դադրիմ ինքզինքս այրելով (Ճրագը կ'առնէ)։

Ֆրէ (Ճրագը ձեռքէն առնելով) — Ի՞նչ կ'ընես, խենդեցա՞ր։

Մուզ — Չէ՛, չէ՛, առանկ ձեւերդ ա՛լ կլլող չկայ, գերեզմանը բանալով եթէ մէջը մտնաս՝ նորէն չեմ հաւատար։

Ֆրէ — Բայց այս ատիճան անգթութիւն չըլլա՛ր. ահա կը խոստովանինք թէ յանցաւոր ենք, ներէ՛ ըսինք, բան մը էր եղաւ, ալ ի՞նչ ընենք, այս ամենը որ ձեզի 150 ոսկի եղաւ, չնչին գումար մ'է, այս ատիճան անգութ ըլլալու չէք։

Մուզ — Չնչին մի՞, կոշիկիս կտորը, դուն 150 ոսկի վատրկած ունի՞ս։

Ֆրան — Ներեցէք տէր իմ, ամենքս ալ յանցաւոր ենք, ի՞նչ ընենք, բան մը էր եղաւ, եկէ՛ք անյիշաչար եղիք և մեզի զրկած գումարովնիդ Ալէքսիի ուՖլորինի հարսնիքը ընենք։

Մուզ — Անդին կորսուեցէք, անանկ բան չեմ ուզեր, ես յուզարկաւորութեան հանդէսի եկայ, հարսնիքի համար չեկայ։

Ալֆ — Խօսք մ'ալ ես ըսեմ, պարոն, եկէք «չէ» մի՛ ըսէք, աղուորիկ հարսնիք մը ընենք։

Մուզ — Անդին կորսուէ, կոշիկիս կտորը, դուն ի՞նչ ե-

բեռով հետս կը խօսիս։

Ամենքը — Պարոն Մուզաֆ, գթա՛ մի՛ գի, գթա՛։

Մուզ — Ամենեւի՛ն, ժամիկ չեմ ըներ։

Ամենքը — Թողութիւն, թողութիւն, ո՛վ հայր Մուզաֆ, գթութիւն։ (Ու զայն գրկելով օդին մէջ կը բարձրացուցնեն)

Մուզ — Է՛, է՛, բաւական է, հանգիստ թողէք զիս, հաճութիւն տուի. (Մեկուսի) չի տամ ի՛նչ ընեմ, վերջապէս եղբօրորդիս է, իմ արիւնս ըսել է. (Բարձր) ահա հաճութիւն տուտմ, բայց դուն ալ խոստացիր որ նորէն ասանկ չարութիւն մը չպիտի ընես։

Ալէք (Մուզարի ձեռքը պագնելով) — Ահա կը խոստանամ, իմ պաշտելի հօրեղբայրս։

(Ցլորին — Էս կ'երդուիմ թէ այսուհետև ասանկ բան մը չպիտի ընէ։)

Մուզ (Ցրեսերիցին) — Պարոն ինքնակոչ տոքթոր, եկուր ասանց բուզկեղանիերը անգամ մը գնենք, նայինք ամուրոս գօթիս ազօրալիս ունի՞ն մի։

Ցրէ — Ո՛չ։ ո՛չ, ալ ասանկ բան մը չունիմ, վասն զի իրենց դեղն ու ճարը աղէկ գտան։

Մուզ — Ո՞ւր է նայինք սա առաւ փոխաւ դեղագործը. տոքթորին 11 դեղագիրը թող մէյ մ'ալ կարդա։

Ամենքը — Ահ-պարոն, անոր ալ ներեցէք։

Մուզ — Ոչիր, մուլիր, չուտիր, խելք չի հասնիր, հէ՞։

Ալէք — Անոր ալ ներէ հօրեղբայր իմ, ներէ՛։

Մուզ — Այո՛, քեզի ներելէս ետքը, ուզեմ չուզեմ անոր ալ պիտի ներեմ. մինակ սա մէկ բանին խելքս չի հասաւ. պարտնոդէս տալու համար երբոր իրար անցաք, մէջերնուդ գոնէ մէկը սուտակ չունէ՞ր։

Ցրէ — Ամենեւի՛ն։

Ամենքը — Գրպանիդ մէջն է։

Մուզ — Ըսել է որ ամենքնիդ ալ...

Ամենքը — Անկուտի՛ ենք, անկուտի՛։

(Մուզար բարձրաձայն կը խնդայ, Գերասիմ եւ Գերասիմուհիք նուազարանին հետ կ'երգեն։

Բարեկենդանի անկուտիներն ենք,
Գիշեր ու ցորեկ մենք հով կը կլլենք.
Տեսնողը՝ մեզ խիստ հարուստ կը կարծէ,
Կուշտը անօթին վիճակն ի՞նչ գիտէ։

ՎԱՐԱԳՈՅՐԸ ԿԻՋՆԷ

442168

BIBLIOTHEQUE NATIONALE DE FRANCE
3 7513 02061087 8